

ԱՐԴԵՍՏԱԿԱՆ ՈՎՐԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶՐԱՅԻՆ ՏԵՂԱՎԱՐԺԸ ԴԱՅԿԱԿԱՆ
ԱՏՈՄԱԿԱՅԱՎԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ՈՈՂԳՎԱՆ ԶՈՒՐ-ՄՇԱԿԱԲՈՒՅՆ ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄ

77 ԳԱԱ Գ.Ս.Ղավթյանի անվան հիդրոպարնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Ագրոհամակարգի վլա տեխնածին ազդեցորյան մեծացնանը գուգղնթաց մեծանում է արիեստական ռադիոնուկլիդների (ԱՌՆ) ջրային տեղաշարժը ռոռոգման ջուր-մշակաբույս համակարգում: Մշակաբույսերի ռոռոգման ժամանակ ուժգնանում է ջրում պարունակվող ԱՌՆ-ների անցումը ջրից դեպի մշակաբույս, որը հանգեցնում է նրանց քանակության մեծացնանը: Մշակաբույսերի մեջ ԱՌՆ-ների (^{90}Sr , ^{137}Cs) անցնան գործակիցների (ԱԳ) հաշվարկը կարող է հիմք հանդիսանալ բույսերում նրանց կուտակումը սահմանափակող ռուղիներ վիճակի համար և այդ տեսանկյունից ունի գործնական նշանակություն:

Ուստամնասիրվել է Հայկական ատոմակայանը հարող, Մեծամոր գետի ջրով ռոռոգմուն ագրոցենոզների գործ կարբոնատային վարելահողերում մշակվող առվույտի, տաքդեղի («Փղի կնճիթ» սորտի), սմբուկի («Երևանի սովորական» սորտի) մեջ ռոռոգման ջրից ԱՌՆ-ների ԱԳ-ները, որոնք հաշվարկելիս օգտագործվել են Արարատյան դաշտի հողա-կլիմայական պայմաններում նշված բուսատեսակների համար ընդունված ռոռոգման նորմանները:

ԱՌՆ-ի խտությունը մշակաբույսում, Բք/կգ

ԱԳ=

ԱՌՆ-ի խտությունը ռոռոգման ջրում, $\text{Բք}/\text{մ}^3 \times \text{ռոռոգման նորման վեց. ընթացքում, } \text{մ}^3/\text{մ}^2$

ԱԳ-ները ունեն հետևյալ չափողականությունը $\text{Բք}/\text{կգ}/\text{Բք}/\text{մ}^3$ և թվային արժեքները՝ առվույտ՝ 0,2/0,4, տաքդեղ՝ 0,1/0,04, սմբուկ՝ 0,1/0,03: Ակնհայտ է, որ ռոռոգման ջրից ԱՌՆ-ների տեղաշարժը առվույտում գերակշռել է բանջարանոցային մշակաբույսերի նույն ցուցանիշին՝ ընդ որում ^{137}Cs -ի համար ավելի մեծ չափով: Սա պայմանավորված է ինչպես բուսատեսակների կենսաբանական առանձնահատկություններով, այնպես էլ ռոռոգման տարրեր ռեժիմով: Տարդեղում գերակշռել է միայն ^{137}Cs -ի ջրային տեղաշարժը սմբուկի համեմատ: Տարդեղում ^{90}Sr -ի առավել կուտակում տեղի է ունեցել հողից կլանան հաշվին: Այդ մասին են վկայում կուտակման գործակիցների համեմատումը ^{90}Sr -ի կուտակման գործակիցը տարդեղում>սմբուկի նույն ցուցանիշից:

L.M.Kalachyan, K.A.Kocharyan, M.M.Avetisyan

MIGRATION OF ARTIFICIAL RADIONUCLIDES THROUGH WATER IN IRRIGATION WATER-CROP SYSTEM IN THE VICINITY OF THE ARMENIAN ATOMIC POWER STATION

Summary

The transition coefficient of artificial radionuclides ^{90}Sr , ^{137}Cs occurring in alfalfa, paper and eggplant grown in the gray carbonate soils at the vicinity of AAPS and irrigated by water from Metsamor river was calculated. It was established that the transition coefficient of artificial radionuclides is higher in alfalfa than in pepper or eggplant. This is explained by the biological peculiarities of alfalfa as well as by different irrigation regimes. Pepper accumulates only more ^{137}Cs as compared with eggplant.